ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԷԹՆԻԿ ԿԱԶՄԻ «ՎԱՅՐԻՎԵՐՈՒՄՆԵՐԸ»

DOI: 10.52174/2579-2989_2023.4-52

Թերեզա ՇԱՀՐԻՄԱՆՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Պետական և մունիցիպալ կառավարում» մասնագիտությամբ, իսկ 2012 թ.՝ նույն մասնագիտության մագիստրատուրան և ստացել կառավարման մագիստրոսի աստիճան: 2012-2015 թթ. եղել է հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնի հայցորդ:

2013 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում:

Հեղինակ է 4 գիտական հրապարակում երի, այդ թվում՝ մեկ մենագրության համահեղինակ:

https://orcid.org/0000-0001-8888-045X

Հիմնաբառեր. *աշխատանքային միգրացիա, գործազուրկ, աշխատանքի թույլտվություն, ցածր որակավորում ունեցող աշխատուժ, էժան աշխատուժ*

Աշխատանքային միգրացիայից օգուտ ստանալու հավանականությունը մեծապես կախված է ծագման ու նպատակակետ երկրների քաղաքական համակարգերից, գործընթացի կանոնակարգված բնույթից, ինչպես նաև երկրների միջև երկկողմ, տարածաշրջանային և բազմակողմ համագործակցությունից: Հայաստանում այժմ նկատվում է Հնդկաստանի և Իրանի քաղաքացիների ներհոսքի կտրուկ աճ, բացի այդ, վերջին տարում արձանագրվել է աշխատանքային միգրանտների հոսքի նոր աշխարհագրություն՝ հատկապես Ուկրաինայից, Չինաստանից, Եգիպտոսից:

Հայաստանը, ելնելով ստեղծված իրավիճակից, քայլեր է ձեռնարկում կանոնակարգելու գործընթացը՝ համապատասխան իրավական ակտերի սահմանմամբ, միասնական հարթակի ստեղծմամբ և, որ ամենակարևորն է, ակտիվ փոխգործակցությամբ այն երկրների հետ, որտեղից աշխատանքային միգրանտների ակտիվ հոսք է նկատվում: Հասարակության մեջ միգրանտների վերաբերյալ կարծիքները տարբերվում են՝ սկսած կտրուկ մերժումից մինչև տնտեսական շահի հեռանկար:

Աշխատանքային միգրացիան այսօր դարձել է բարդ և անընդհատ զարգացող համաշխարհային երևույթ: Դրա շարժընթացը հսկայական ազդեցություն ունի միգրանտների ծագման, տարանցման կամ նպատակակետ երկրների սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Շատ երկրներ վատ աշխատաշուկայի և կառավարման թույլ համակարգերի պատճառով չեն կարողանում հաղթահարել այս իրավիճակը, ինչը հան-

գեցնում է անօրինական միգրացիայի, անձնակազմի թերօգտագործման, որակավորումների անհամապատասխանության, թափուր աշխատատեղերի առկայության, խտրականության, անհավասարության և շահագործման դրսևորումների աճի:

Պատշաճ կարգավորում չստանալու դեպքում աշխատանքային միգրացիան կարող է սրել արժանավայել աշխատանքի պակասուրդի խնդիրն աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքների համար, ինչպես նաև բացասական ու երկարաժամկետ սոցիալ-տնտեսական ազդեցություն ունենալ միգրանտների ծագման ու նպատակակետ երկրներում: Ոչ մի երկիր ինքնուրույն կերպով չի կարող արդյունավետորեն լուծել աշխատանքային միգրացիայի խնդիրը[1]: Զարգացած երկրների փորձը թույլ է տալիս տեսնել ընդունող երկրներում միգրանտների չափավոր ազդեցությունը զբաղվածության, գործազրկության և աշխատավարձի վրա: Օրինակ՝ Գերմանիայում 1991 թվականից մինչև 2005 թվականը միգրանտների թվի 10% աճն ուղեկցվել է տեղական բնակչության շրջանում գործազրկության ընդամենը 1,5% աճով: Ընդ որում, միգրացիայի ազդեցությունը տեղական աշխատավարձերի վրա համարվում է աննշան, և մի շարք ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ Գերմանիայում օտարերկրյա աշխատողների մասնաբաժնի 1% աճը հանգեցրել է «կապույտ օձիքների» աշխատավարձի 0,2% և «սպիտակ օձիքների» աշխատավարձի 1,3% աճի[2]: Գերմանական տնտեսությունը, ապօրինի միգրանտների աշխատանքից հավելյալ արժեք կորզելով, նոր օրինական աշխատատեղեր է ստեղծում: Այսպիսով՝ գործազրկության վրա միգրացիայի բացասական ազդեցության վերաբերյալ որոշակի տվյալներ չկան: Նույն կերպ, Մեքսիկայից միգրանտները Կալիֆոռնիայում (ԱՄՆ) կանխում են բերքահավաքի ժամանակ դաշտերում բերքի կորուստը, Նևադայում (ԱՄՆ) շինարարական բիզնեսը հիմնված է անօրինական միգրանտների վրա, որոնք աշխատողների ավելի քան 50%-ն են: Տեխասում (ԱՄՆ) է անցկացվել ուսումնասիրություն նահանգի տնտեսության և բյուջեի վրա անօրինական ներգաղթի ազդեցության վերաբերյալ, և պարզվել է, որ 1,4 միլիոն անօրինական ներգաղթյալ 2005 թվականին «ստեղծել» է 17,7 միլիարդ ԱՄՆ դոլար: Ընդ որում, նրանք պետական բյուջե են մուտքագրել 1,58 միլիարդ ԱՄՆ դոլար, ինչը գրեթե 0,5 միլիարդ ԱՄՆ դոլարով ավելի է, քան տարբեր սոցիալական ծառայությունների տեսքով ստացվածը[3]:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա, ըստ Միգրացիայի միջազգային կազմակերպության տվյալների, այստեղ կա ավելի քան 190 հազար միգրանտ, որը ընդհանուր բնակչության 6,5%-ն է: Հայաստանի մշտական բնակչությունը 2022 թվականին (2 977.1) 2011 (3018,9) թվականի համեմատ նվազել է գրեթե 41.8 հազար մարդով կամ 1,34 տոկոսով, իսկ աշխատանքային ռեսուրսները նույն ժամանակահատվածում պակասել են 334,8 հազարով կամ 14 տոկոսով[4]: ՀՀ միգրացիոն քաղաքականության հիմնական նպատակն է բարելավել օրինական միգրացիայի գործընթացը՝ պարզեցնելով Հայաստան մուտքի ռեժիմը, կարգավորելով հանրապետությունում օտարերկրացիների աշխատանքային պայմանները և խթանելով կրթության համաշխարհայնացման գործընթացը: 2018 թվականից սկսած՝ նույնիսկ արձանագրվել է սահմանահատումների դրական հաշվեկշիռ, և այդ միտումը շարունակվել է մինչև 2021 թվականը: 2022 թ.-ին կրկին գրանցվել է սահմանահատումների դրական հաշվեկշիռ (+38 732), ի տարբերություն 2021 թ. նույն ժամանակաշրջանի (-43874): Ինչ վերաբերում է 2023 թվականին, ապա հունվար-օգոստոսի տվյալներով՝ ՀՀ ժամանողների թիվը գերազանցել է մեկնողներինը՝ կազմելով 2170 մարդ, իսկ ըստ քաղաքացիության նույնականացման (ՀՀ փաստա-

[1] «Трудовая миграция», https://www.ilo.org/moscow/dw4sd/themes/migration/lang--ru/index.htm
[2] Уровень безработицы в Армении снизился – Мане Тандилян 01.11.2018, https://ru.armeniasputnik.am/society/20181101/15435749/uroven-bezraboticy-v-armenii-sokratilsya-mane-tandilyan.html
[3] Նույն տեղում:
[4] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-օգոստոսին, https://www.armstat.am/file/article/sv_08_23a_520.pdf

թղթերով) սահմանային անցումների դեպքում՝ 26658 մարդ[5]: Սա աննախադեպ երևույթ է, քանի որ մինչև 2018 թվականը սահմանահատումների դրական հաշվեկշիռ չի գրանցվել: Իրականում, սահմանային հատումների թիվն ավելի օբյեկտիվորեն է արտացոլում իրավիճակը, քանի որ նույն անձը կարող է մի քանի անգամ հատել սահմանը, և սահմանին գրանցվելիս տեսանելի են նրա բոլոր մուտքերն ու ելքերը, իսկ, սահմանահատումների վիճակագրության համաձայն, անձերը բացահայտվում են՝ հաշվի առնելով քաղաքացիությունը: Այս տեսանկյունից, կարևոր է, թե ժամանողների և մեկնողների թվի որ մասն են կազմում օտարերկրյա քաղաքացիները և ինչ նպատակով են նրանք այցելել Հայաստան[6]: ՀՀ սահմանը հատելիս մուտքերի և ելքերի միջև ամենամեծ տարբերությունը բաժին է ընկնում Ռուսաստանի և Հնդկաստանի քաղաքացիներին, և այդ մնացորդը վերջին տարիներին նկատելիորեն աճում է:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում 2015 թ.-ին կատարված փոփոխությամբ սահմանվել է, որ հնարավոր գործատուն պետք է դիմում ներկայացնի իրավասու մարմիններին՝ ստանալու աշխատանքի թույլտվություն օտարերկրյա աշխատուժի համար: Միայն 2022 թ. հունվարի 1-ին գործարկվեց միասնական հարթակը, որը կոչված է օտարերկրացի աշխատողների ընտրության գործընթացն ամբողջությամբ էլեկտրոնային տարբերակով իրականացնելուն: Գործընթացը սկսվում է գործատուի առցանց գրանցումով: Գործատուն հարթակի միջոցով օտարերկրացուն է ներկայացնում աշխատանքի հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակի տրամադրման հայտ: Լրացվում է թափուր աշխատատեղի նկարագիրը՝ աշխատատեղը օտարերկրացիով զբաղեցնելու վերաբերյալ, այնուհետև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համաձայնությունը ստանալուց հետո՝ օտարերկրացու տվյալները: Հաջորդ քայլում օտարերկրացին իր էլեկտրոնային փոստի հասցեին ստանում է ծանուցում աշխատանքային գործունեության հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակի տրամադրման վերաբերյալ: Հարթակի միջոցով գրանցվածների տվյալների (2022 թ.-ից մինչև 2023 թ. 2-րդ եռամսյակի ավարտը) վերլուծությամբ կարելի է հանգել այն եզրակացության, որ Հայաստան աշխատանքի են գալիս հիմնականում Հնդկաստանից (1461), Իրանից (1175), Ուկրաինայից (148), Եգիպտոսից (189), Ֆիլիպիններից (131): Գործատուները թույլտվություն են ստացել նաև Կորեայի, Չինաստանի, Կանադայի, Բրազիլիայի, Վրաստանի, Թաիլանդի և այլ երկրների քաղաքացիների համար: Հայաստանում աշխատող՝ ԵԱՏՄ-ից դուրս երրորդ երկրների քաղաքացիների թիվը մեր աշխատողների ընդհանուր թվի մոտ 1%-ից էլ պակաս է, և հաշվի առնելով շարժընթացը, այս ցուցանիշն առավելագույնը կարող է լինել 3%: Տվյալները վկայում են, որ ունենք աշխատանքային միգրանտների նոր աշխարհագրություն, ինչպիսիք են Ուկրաինան և Եգիպտոսը (գծապատկեր 1): Ինչ վերաբերում է առաջատարին, ապա այստեղ ակնառու է Հնդկաստանի դերակատարումը, որի մասին են վկայում նաև սահմանային անցումների, կացության թույլտվություն ստացողների պաշտոնական թվերը, Հնդկաստանի քաղաքացիների թվի կտրուկ աճը ՀՀ-ում: Հետևաբար՝ տրամաբանական է ուսումնասիրել նման ներգաղթի նախապատմությունը:

Դեռևս 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ Հնդկաստանից աշխատանքային միգրանտների թիվը կազմել է 150, ուսանողներինը՝ 1325, ձեռնարկատիրական գործունեության նպատակով ժամանածներինը՝ 43 մարդ[7]: ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ այս տարվա հունվար-օգոստոս ժամանակահատվածում հանրապետություն մուտք գործած Հնդկաստանի քաղաքացիների թիվը կազմել է 29835[11]: Այս հոսքն ունի էքսպո-

[5] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-օգոստոսին, https://www.armstat.am/file/article/sv_08_23a_520.pdf

[6] Т. Арустамян, Л. Паноян, Тенденции роста иммиграции, 2019,03,15, https://orbeli.am/ru/post/240/2019-03-15/Тенденции+роста+иммиграции

[7] Глава миграционной службы: В Армении всего 150 трудовых мигрантов из Индии,2020-02-10, https://radiovan.fm/station/article/17215



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Հարթակի միջոցով օտարերկրյա քաղաքացիների ստացած թույլտվությունների քանակն ըստ եռամսյակների[8]



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Հարթակի միջոցով թույլտվություն ստացած աշխատանքային միգրանտների աշխարհագրությունը (բացի ԵԱՏՄ քաղաքացիներից)[9]



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Հարթակի միջոցով թույլտվություն ստացած աշխատանքային միգրանտների առաջատար տասնյակի աշխարհագրությունը (բացի ԵԱՏՄ քաղաքացիներից)[10]

[8] Աղբյուրը՝ workpermit.am հարթակում ստացված դիմումների հիման վրա ձևավորված ներքին օգտագործման տվյալներ:
[9] Տես նույն տեղում:
[10] Տես նույն տեղում:

նենտալ աճ՝ 134% կամ 2,34 անգամ, ինչը կարելի է տեսնել՝ համեմատելով 2023 թվականի 1-ին եռամսյակի ցուցանիշը (ՀՀ է մուտք գործել Հնդկաստանի 617 քաղաքացի) 2-րդ եռամսյակի հետ (ՀՀ է մուտք գործել Հնդկաստանի 1444 քաղաքացի): Այստեղ կարևոր է այն փաստը, որ վերջին եռամսյակի ընթացքում հավասարման միտում է նկատվում ԵԱՏՄ քաղաքացիների և այլ պետություններից եկած աշխատանքային միգրանտների միջև:

2022 և 2023 թվականների հունվար-օգոստոս ժամանակահատվածում, ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների, ՀՀ է այցելել Հնդկաստանի 50835 քաղաքացի, որից անցած 6 եռամսյակի ընթացքում հարթակի միջոցով աշխատանքային թույլտվություն է ստացել 1461-ը: Միգրանտների աճող թվի դրական և բացասական կողմերի մեջ կարևոր հանգամանքներ են վերջիններիս օրինապահ և կարգապահ բնույթը, ներգրավվածությունն աշխատաշուկայում և սոցիալ-մշակութային ինտեգրումը: Միգրանտների օրինապահ և կարգապահ բնույթի բացահայտման համար հիմք են ծառայում ՀՀ ոստիկանությունից ստացված տվյալները՝ օտարերկրացի աշխատողների մասնակցությամբ: Օրինակ՝ ժամանած հնդիկների մասով տվյալների համաձայն՝ 2021 թվականին Հայաստանի տարածքում գրանցվել է նրանց մասնակցությամբ ընդամենը 18 հանցագործություն հետևյալ հոդվածներով՝ 14 ծեծի, 3 գողության, սուտ մատնություն և ևս մի քանի այլ դեպքեր: Միաժամանակ, 2021 թվականին Հայաստանի տարածքում Հնդկաստանի քաղաքացիների կողմից արձանագրվել է վարչական իրավախախտման 1322 դեպք, այդ թվում՝ վտանգավոր և այլ թափոնների տեղափոխման ու հեռացման կարգը խախտելու, սահմանը հատելու փաստեր, բնակության կանոնների խախտում և այլն: Այս տեղեկությունների հիման վրա կարելի է եզրակացնել, որ հնդիկ միգրանտները հանցավոր կամ խիստ հակաօրինական վարքագիծ չունեն, հետևաբար՝ նրանց ներկայությունը բացասաբար չի անդրադառնում հասարակության անվտանգության վրա:

Այդուհանդերձ, հայ հասարակությունն այդքան էլ դրականորեն չի ընկալում Հնդկաստանից և Իրանից միգրանտների հոսքը՝ պայմանավորված մեր երկրի մոնոէթնիկ երկիր լինելու հանգամանքով (բնակչության 98%-ը ազգությամբ հայեր են և միայն 2%-ը՝ ազգային փոքրամասնություններ): Նման միտում է նկատվել նաև ԽՍՀՄ տարիներին[12]:

Տվյալների համաձայն՝ 16 տարեկանից բարձր տարիքի բնակչության մոտ 8%-ը ներգրավված է աշխատանքային միգրացիայի գործընթացում: Աշխատանքային միգրանտների ավելի քան 90%-ը 20-54 տարեկան մարդիկ են, իսկ արական սեռի մասնաբաժինն ավելի քան 89% է[13]:

Ըստ Հայաստանում աշխատանքի տեղավորման առաջատար գործակալությունը





ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Աշխատանքային միգրանտների սեռատարիքային կազմը (բացի ԵԱՏՄ քաղաքացիներից)[14]

[11] Աղբյուրը՝ workpermit.am հարթակում ստացված դիմումների հիման վրա ձևավորված ներքին օգտագործման տվյալներ:
[12] Всесоюзная перепись населения 1989 года,Национальный состав населения по республикам, СССРhttp://www.demoscope.ru/weekly/ssp/sng_nac_89.php?reg=13
[13] https://cis.minsk.by/page/18989
[14] Աղբյուրը՝ workpermit.am հարթակում ստացված դիմումների հիման վրա ձևավորված ներքին օգտագործման տվյալներ:

ների հաղորդումների՝ Հնդկաստանի քաղաքացիների դեպքում գործատու-աշխատող հարաբերություններ հաստատելիս առկա են որոշակի հաղորդակցական դժվարություններ, անկախ այն հանգամանքից, որ վերջիններս պատրաստ են շատ ավելի ցածր աշխատավարձով աշխատելու: Լեզվի խնդիրը չի խանգարում միայն ցածր որակավորմամբ աշխատուժին, օրինակ՝ բանվոր, հավաքարար, լվացող և այլն: Հնդկաստանի քաղաքացիները հիմնականում աշխատանք են փնտրում շինարարության, առևտրի, սննդի և հյուրանոցային ոլորտներում[15]: Միգրանտները, ամենայն հավանականությամբ, այս դեպքում «մրցակցում» են տեղի բնակչության հետ ցածր որակավորում պահանջող աշխատատեղերի համար:

Հոդվածի շրջանակում հարցում ենք անցկացրել 100 աշխատանքային միգրանտների (մեծամասնությունը՝ Հնդկաստանի քաղաքացի) շրջանում՝ պարզելով վերջիններիս զբաղվածության ոլորտը, վարձատրության չափը, եկամուտը, բավարարվածության աստիճանը և վերջնապատակը: Օրինակ՝ շինարարական աշխատանքի համար հնդիկ միգրանտներն օրական ստանում են 6000-8000 ՀՀ դրամ, մինչդեռ հայ բանվորները նույն աշխատանքը կատարում են 10000-15000-ով: Ավտոլվացման կետերում վերջիններս վաստակում են 10000-12000, իսկ հնդիկները՝ 5000-7000 ՀՀ դրամ:

Հնդկաստանի քաղաքացիները զբաղված են նաև գյուղատնտեսական ոլորտում՝ աշխատելով հանրապետության տարբեր մարզերի (մեծամասնությունը՝ Արարատի և Արմավիրի մարզերի գյուղերի) ջերմոցներում, ինչպես նաև անասնապահության մեջ (օրինակ՝ հովիվ՝ մինչև 180000 դրամ աշխատավարձով):

Առավել բարձր է աշխատավարձն առաքման ծառայություններում, որտեղ զբաղվածներն ամսական ստանում են 250000-400000 ՀՀ դրամ: Ինքնագլորների ծառայության ոլորտում, որը շատ դեպքերում երկրորդ աշխատանք է, օրական վարձատրությունը մոտավորապես 3000-4000 դրամ է: Արդեն մի քանի տարի Հայաստանում ապրող, հիմնավորված օտարերկրացի աշխատանքային միգրանտներն աշխատում են նույնիսկ որպես վարորդներ տաքսու ծառայություններում՝ օրական 10000-15000 ՀՀ դրամ եկամտով:

Օտարերկրյա քաղաքացիները, համարվելով «էժան» աշխատուժ, հաճախ կատարում են այնպիսի աշխատանքներ, որոնք տեղացիները հրաժարվում են կատարել նույն գումարի դիմաց: Հարցման ժամանակ պարզեցինք, որ աշխատանքային գործակալություններն աշխատանքային միգրանտներից գանձում են 3000-15000 ԱՄՆ դոլար՝ օգտվելով այն հանգամանքից, որ վերջիններս չեն տիրապետում տեղական կանոններին:

Ի տարբերություն հնդիկների, իրանցի աշխատանքային միգրանտներն ավելի լավ են տեղեկացված հայաստանյան օրենքներին: Նրանք նաև մուտք են գործում մեր երկիր՝ առանց վիզայի և հաճախ աշխատում են շինարարության կամ սպասարկման ոլորտներում: Հնդիկները, իրանցիներն ու պակիստանցիները պատրաստ են յուրաքանչյուր աշխատանքի՝ ցանկացած պայմաններում: Բնականաբար, նման «համապատասխանությունը» շատ գրավիչ է ժամանակակից գործատուների համար:

Զբաղվածության պետական գործակալության տվյալներով՝ սեպտեմբերի 1-ի դրությամբ տարածքային կենտրոններում հաշվառված է աշխատանք փնտրող 64159 (այդ թվում կին՝ 39723) մարդ[16]: Հանրապետությունում գործազուրկի կարգավիճակ ունի 170000 մարդ[17]: Հաշվի առնելով երկրում գործազրկության մակարդակը (15.5%)՝ գործատուն պետք է նախ թափուր պաշտոնները համալրի ՀՀ քաղաքացիներով, և միայն մասնագետ չգտնելու դեպքում նա կարող է աշխատանքի ընդունել օտարերկրյա քաղաքացու: «Օտարերկրյա անձանց մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի

[15] Т.Арустамян, Л. Паноян, «Тенденции роста иммиграции», 2019,03,15, https://orbeli.am/ru/post/240/2019-03-15/Тенденции+роста+иммиграции

[16] Աղբյուրը՝ www.socservice.am հարթակում ստացված դիմումների հիման վրա ձևավորված ներքին օգտագործման տվյալներ:

[17] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ. Հունվար - փետրվարին, https://armstat.am/file/article/sv_02_23a_141.pdf?fbclid=IwAR3ZfFIUA5NCfAOCtqvthjNszWOnWAkkZH0dQ7Oke7jWDiXNE4RoRQO642U

3-րդ կետում սահմանված է. «ՀՀ աշխատաշուկայի կարիքները գնահատելու նպատակով ՀՀ կառավարության որոշումը, որի համաձայն՝ գործատուի համար սահմանվում է ժամկետ, որի ընթացքում նա պարտավոր է լրացնել իր առկա թափուր աշխատատեղը ՀՀ քաղաքացիներից: Եթե սահմանված ժամկետում զբաղվածության հանրապետական ծառայություններից գործատուի պահանջները բավարարող թեկնածուի առաջարկ չլինի, ապա գործատուն կարող է ինքը փնտրել այդ պահանջներին համապատասխանող օտարերկրյա անձ և դիմել լիազոր մարմին՝ որոշակի աշխատանքի թույլտվություն տալու համար»[18]: Հայաստանում պարադոքսային իրավիճակ է ստեղծվել՝ նվազող բնակչություն և գործազրկություն ունեցող երկրում աշխատանքային միգրանտների առկայություն[19]: ՀՀ-ում այժմ բազմաթիվ թափուր աշխատատեղեր կան, և մի շարք ոլորտներում աշխատանքի են ընդունում օտարերկրացիների, որոնք դժվարությամբ են հաղթահարում լեզվական արգելքը, իսկ տեղի բնակիչներն աշխատանք գտնելու ակնկալիքով մեկնում են Ռուսաստանի Դաշնություն ու այլ հեռավոր վայրեր, քանի որ, ի տարբերություն ներգաղթյալների, պատրաստ չեն աշխատելու առաջարկվող պայմաններով: Արդյունքում, հանրապետությունում ավելի քան 64159 հազար մարդ աշխատանք է փնտրում, իսկ գործատուները չեն կարողանում գտնել համապատասխան մասնագետներ :

Այսօր աշխատանքային միգրանտները, զբոսաշրջիկները և ձեռնարկատերերը նույն հեշտությամբ կարող են վիզա ստանալ, իսկ ժողովրդագրական նման ճգնաժամի պայմաններում միգրանտների մեծ հոսքերը կարող են աղետալի դառնալ Հայաստանի համար: Աշխատանքի շուկայում դեմպինգը կարող է գոհացնել միայն գործատուներին: Պետք է հասկանալ, որ ցածր եկամուտ ունեցող ընտանիքներից միգրանտների մեծամասնությունը հեշտությամբ կզբաղեցնի Հայաստանի էժան աշխատաշուկայի հատվածը: Ներգաղթի մեծ հոսքի դեպքում դա կարող է վատ ազդեցություն ունենալ երկրի տնտեսության, ինչպես նաև աշխատաշուկայի վրա և լրացուցիչ խթանել հայ աշխատունակ բնակչության արտագաղթը, որը դժվար թե կարողանա ապահովել իրեն ներկայիս աշխատավարձային պայմաններում: Այսպիսով՝ փոքր և միջին ձեռնարկատերերն ու ֆերմերները կարող են հանդես գալ միգրացիայի օգտին՝ դրանում տեսնելով իրենց շահույթն առավելագույնի հասցնելու պայմաններ: Սա նոր մշակույթի և ավանդույթի ներգաղթ է, որն իր հերթին կարող է ազդել ռեստորանային բիզնեսի և առհասարակ սպասարկման վրա[20]:

Միգրացիոն հոսքերից հնարավոր չէ խուսափել, և ՀՀ միգրացիոն քաղաքականության ծրագրում պետք է կատարել փոփոխություններ, որոնք կհանգեցնեն ոչ միայն օրինական միգրացիայի և այլ երկրների հետ վիզային ռեժիմի կանոնակարգման, այլև հստակորեն կսահմանեն դրույթներ, որոնք երաշխավորում են միգրանտների անվերահսկելի հոսքերից խուսափելու հնարավորություն: Միգրացիոն քաղաքականությանը զուգընթաց, անհրաժեշտ է մշակել սոցիալ-տնտեսական ծրագիր, որը, Հայաստանի քաղաքացիների զբաղվածության ապահովման հետ մեկտեղ, չի խոչընդոտի կամ խնդիրներ չի ստեղծի օրինական միգրանտների համար: Հնդկաստանի քաղաքացիների ներգաղթը լավ առիթ է Հայաստանի միգրացիոն քաղաքականության վերահմաստավորման և բարեփոխման համար, որի արդյունքն արդեն տեսանելի է՝ ի դեմս միասնական հարթակի: Բացի այդ, յուրաքանչյուր ոլորտում հաջողության հասնելու համար կարևոր են միջազգային փորձը և համապատասխան մասնագետների ներգրավվածությունը ծրագրի իրականացման գործընթացում:

Ինչ վերաբերում է ներգաղթի նմանատիպ աճին, ապա դա պայմանավորված է քաղաքացիների միակողմանի պարզեցված վիզային ռեժիմով, մասնավորապես՝ Հնդկաստանի և Հայաստանի բարիդրացիական հարաբերություններով: Քանի որ առկա է էքսպոնենտալ աճ, հետագայում

[18] АЛ. ТАРАСОВ,«Это – свободный мир!», 27 февраля 2009, http://polit.ru/article/2009/02/27/mir/

[19] Г.И. Глущенко, Миграция и развитие: мировые тенденции, "Вопросы статистики", 2008, №2, с. 65-79, http://www.demoscope.ru/weekly/2008/0339/analit01.php

[20] www.socservice.am

խնդիրներ չունենալու համար անհրաժեշտ է վերանայել վիզային ռեժիմը Հնդկաստանի և բոլոր երկրների հետ, որտեղ կենսամակարդակը շատ ցածր է, վերահսկել այս երկրներից միգրանտների հոսքը՝ ելնելով աշխատաշուկայում առկա պահանջարկից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք, 2006 թ.:
2. ՀՀ միգրացիայի պետական կառավարման հայեցակարգ և գործողությունների ծրագիր, 20.05.2021 թ.:
3. ՀՀ միգրացիայի քաղաքականության 2017-2021 թթ. ռազմավարություն, 27.03.2017 թ.:
4. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ. հունվար- փետրվարին, https://armstat.am/file/article/sv_02_23a_141.pdf?fbclid=IwAR3ZfFIUA5NCfAOCtqvthjNszWOn-WAkkZH0dQ7Oke7jWDiXNE4RoRQO642U
5. А. ТАРАСОВ, «Это – свободный мир!», 27 февраля 2009, http://polit.ru/article/2009/02/27/mir/
6. Всесоюзная перепись населения 1989 года, Национальный состав населения по республикам, СССР, http://www.demoscope.ru/weekly/ssp/sng_nac_89.php?reg=13
7. Г.И. Глущенко, Миграция и развитие: мировые тенденции, «Вопросы статистики», 2008, №2, с. 65, http://www.demoscope.ru/weekly/2008/0339/analit01.php
8. Глава миграционной службы: В Армении всего 150 трудовых мигрантов из Индии, 10.02.2020, https://verelq.am/ru/node/60061
9. Ш.Авдалян,Количество безработных в Армении - Sputnik Армения, 1920, 14.09.2021, https://ru.armeniasputnik.am/20210906/Trudovoy-paradoks-armyane-uezzhayut-na-zarabotki-v-RF-indiytsy-obustraivayutsya-v-Armenii-28910118.html
10. О росте мигрантов из Индии рассказали власти Армении, 10 янв 2019, https://sng.fm/10267-o-roste-migrantov-iz-indii-rasskazali-vlasti-armenii.html
11. Об основах миграционной политики в Республике Армения (РА). Пояснительная записка “CARIM-East” 12/03, http:// www.carim-east.eu/media/sociopol_module/Explanatory%20Notes%20 Armenia%20-%2003.pdf 20
12. Пашинян назвал причину безработицы в Армении при наличии вакансий, 23.08.2018, http://newsarmenia.am/news/society/pashinyan-nazval-prichinu-bezrabotitsy-v-armenii-pri-nalichii-vakansiy-/
13. Привлекательность Армении для трудовых мигрантов объяснил эксперт, 10.02.2020, https://centralasia.news/3436-privlekatelnost-armenii-dlya-trudovyh-migrantov-obyasnil-ekspert.html
14. Рубен Мхитарян, Трудовой парадокс: армяне уезжают на заработки в РФ, индийцы обустраиваются в Армении, 06.09.2021, https://ru.armeniasputnik.am/20210906/Trudovoy-paradoks-armyane-uezzhayut-na-zarabotki-v-RF-indiytsy-obustraivayutsya-v-Armenii-28910118.html
15. Статистика ЕВРОСТАТ, http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/Asylum_stati
16. Уровень безработицы в Армении снизился – Мане Тандилян 01.11.2018, https://ru.armeniasputnik.am/society/20181101/15435749/uroven-bezraboticy-v-armenii-sokratilsya-mane-tandilyan.html
17. Integrating Labour Migration into the 2013 UN High-level Dialogue on International Migration and Development, and the Post-2015 UN Development Agenda / ILO position paper. Geneva: ILO, 2013
18. https://workpermit.am
19. www.socservice.am

Тереза ШАГРИМАНЯН
Администратор исследовательского центра «Амберд», АГЭУ

АРМЕНИЯ И МИР

«КОЛЕБАНИЯ» В ЭТНИЧЕСКОМ СОСТАВЕ АРМЯНСКОГО РЫНКА ТРУДА

Вероятность получения выгоды от трудовой миграции во многом зависит от политических систем стран происхождения и назначения, регулируемого характера процесса, а также двустороннего, регионального и многостороннего сотрудничества между ними. В Армении сейчас наблюдается резкий рост притока граждан Индии и Ирана, кроме того, у нас новая география трудовых мигрантов, имеющая тенденцию к увеличению за последний год. Особенно увеличился поток из Украины, Китая и Египта. Сейчас, исходя из сложившейся ситуации, Армения предпринимает шаги по регулированию этого процесса, определяя правовые акты в этом направлении, создавая единую платформу, а главное, активно взаимодействуя с теми странами, из которых наблюдается активный поток трудовых мигрантов. Общественное мнение о мигрантах варьируется от крайнего неприятия до перспектив экономической выгоды.

Ключевые слова: *трудовая миграция, безработные, разрешение на работу, низкоквалифицированная рабочая сила, дешевая рабочая сила*

Tereza SHAHRIMANYAN
Administrator of the «Amberd» Research Center, ASUE

ARMENIA AND THE WORLD

"FLUCTUATIONS" IN THE ETHNIC COMPOSITION OF THE ARMENIAN LABOR MARKET

The likelihood of benefiting from labor migration depends greatly on the political systems of the countries of origin and destination, the regulated nature of the process, as well as bilateral, regional and multilateral cooperation between them. In Armenia, we now have a sharp increase in the influx of citizens of India and Iran, in addition, we have a new geography of labor migrants, which has a growing trend, over the last year. The flow from Ukraine, China, and Egypt has especially increased. Now, based on the prevailing situation, Armenia is taking steps to regulate the process by defining legal acts in this direction, creating a unified platform, and most importantly, actively interacting with those countries from which an active flow of labor migrants is observed. Public opinion on migrants varies from extreme rejection to perspectives of economic gain.

Keywords: *labor migration, unemployed, work permit, low-skilled labor, cheap labor*